5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ մինչև յոթ անդամ,

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ մինչև վեց անդամ
7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ մինչև չորս անդամ:

4. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու նստավայրում:

5. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմ:

6. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

8. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից (1) մեկ տարի ժամկետով:

9. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

10. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

12. Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

13. Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորման ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

14. Հանձնաժաղովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.
2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում դրամական հատուցման տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.
3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.
4) մասնակցել թիրախ բնակավայրերում կարիքների գնահատման մեթոդաբանության քննարկմանը, մշակմանը, օժանդակել կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը (խնդիրների) ռիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.
5) մասնակցել համայնքային հանդիպումներին, քննարկումներին, տեղեկատվական միջոցառումներին.
6) նպաստել սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.
7) աջակցել տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգներին.
8) նպաստել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում մատուցվող դրամական հատուցման ծառաությունների կայունությանը, այդ թվում՝

ցուցաբերել աջակցություն հավաստագրման գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը.

9) օժանդակել մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտման աշխատանքներին.

10) մասնակցել և (կամ) ցուցաբերել խորհրդատվական աջակցություն համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

## III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

15. Բնաիրային օգնություն

Տրամադրվում է համայնքի բնակիչներին՝ սննդի, հագուստի, կոշիկի կամ «սննդի քարտ»-ի տեսքով:

16. Առողջապահական ուղեկցում

Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի համար կատարված հատուցումներ: Կարող են օգտվել այն ընտանիքները, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում և չեն օգտվում նշված ծառայություններից օգտվելու համար պետության կողմից սահմանված վճարման արտոնություններից:

17. Արտակարգ իրավիճակներում սննդի, հագուստի կամ կացարանի տրամադրում:

Տրամադրվում է համայնքում փաստացի բնակվող այն բնակիչներին, որոնք հանդիսանում են արտակարգ իրավիճակներից (երկրաշարժից, ջրհեղեղից, հրդեհից և այլն) տուժած: Ապահովվում են ապրելու համար առաջնային կարիքները:

18. Բնակարանային պայմանների բարեկարգման, կացարանի ընթացիկ վերանորոգման համար գնված շինանյութի դրամական ծախսի հատուցում, որը կարող է սահմանվել միայն այն դեպքերում, եթե տվյալ ընտանիքը գտնվում է կյանքի դժվարին իրավիճակում և առաջացած բնակարանային խնդիրները կամ առկա պայմանները կարող են ազդել տվյալ իրավիճակում ապրող ընտանիքի անդամների կենսագործունեության անվտանգության ապահովման կամ կենսական կարևոր կարիքների բավարարման վրա:

19. Ընտանիքի անդամի մահվան դեպքում աջակցություն:

Դրամական հատուցումը տրամադրվում է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ դրանց կողմից մատուցված ծառայությունների ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով՝ դրամական փոխանցումների միջոցով:

## IV. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

20. Աջակցությունից օգտվելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) Այն անձիք, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում,
2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում:

21. Դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.
1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝
2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝
3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը:

22. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.
1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).
3) բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշման պատճենը,
4) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում) .
5) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված դրամական հատուցման տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).
6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս, առանց ծնողական խնամքի մնալու և այլ).
7) փոստային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.
8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

23. Դիմումները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 2 (երկու) շաբաթյա

ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

24. Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք անհրաժեշտության դեպքում կատարում է տունայց, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում:

25. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

26. Հանձնաժողովի տված դրական եզրակացությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանուն՝ դրամական հատուցում տրամադրելու մասին որոշում կայացնելու համար: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

27. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում դրամական հատուցման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

28. Դրամական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## V. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

29. Դիմումի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը:

30. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

31. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելուց հետո աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

32. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

33. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

34. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին, որն էլ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանուն՝ դրամական հատուցում ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

35. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

36. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, հանգուցյալի տեղափոխում, արտակարգ իրավիճակներ) անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

## VI. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

37. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
2) միայնակ մայր - 1 միավոր,
3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
4) բազմազավակ՝
ա. չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք -2 միավոր,
բ. վեց, յոթ անչափահաս երեխա ունեցող ընտանիք – 3 միավոր,
գ. ութ և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք – 4 միավոր
5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) - 2 միավոր,
6) հաշմանդամություն՝
ա. 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք - 3 միավոր
բ. 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք - 2 միավոր
գ. 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք - 1 միավոր
7) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր
8) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր
9) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր
10) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 4 միավոր
11) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր,
12) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) ունեցող ընտանիք -3 միավոր
13) հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք – 2 միավոր

14) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր
15) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք՝
ա. մեկ երեխայի դեպքում - 2 միավոր
բ. երկու երեխայի դեպքում – 3 միավոր
գ. երեք և ավելի երեխաների դեպքում – 4 միավոր
16) կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք - 3 միավոր
17) մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք -2 միավոր
18) առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք - 3 միավոր
19) խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք - 3 միավոր
20) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) ընտանիք – 4 միավոր
21) 2023 թվականի պատերազմական գործողությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված ընտանիք – 3 միավոր
22) ՀՀ Կառավարության 17 նոյեմբերի 1998 թ-ի N 713 որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի սահմանամերձ բնակավայրերերի (Աղին, Հայկաձոր, Անիպեմզա, Բագրավան, Ջրափի, Շիրակավան, Իսահակյան, Լուսաղբյուր) ցանկում բնակվող ընտանիք – 1 միավոր
23) անբարենպաստ այլ պայմաններ - 1-ից 4 միավոր (հիմնավորում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով)
38. Դրամական հատուցումը ցուցաբերվում է նվազագույն 4 միավոր ստանալու դեպքում:
39. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

## VII. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

40. Դրամական հատուցումը տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմումը կամ գրությունը.
2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.
3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.
4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.
5) հանձնաժողովի եզրակացությունը.

6) սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը.
7) դրամական հատուցում ցուցաբերելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու որոշումը.
8) առևտրային կամ առողջապահական ծառայություններին դրամական փոխանցումը հավաստող փաստաթուղթ
41. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ (սոցիալական գործ) և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:
42. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:
43. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած դրամական հատուցման վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

## VIII. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դրամական հատուցումները իրականացվելու են համայնքային բյուջեի «Նպաստներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:
2. Մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Ձեռքբերված ծառայությունների կամ ապրանքների դիմաց վճարումները համայնքապետարանն իրականացնում է ծառայություն մատուցած կամ մատակարար կազմակերպություններին՝ իրենց կողմից կոնկրետ անձի մասով ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:
4. Կազմակերպություններին տրամադրված դրամական հատուցումները կարող են լինել դրանց կողմից մատուցված ծառայությունների կամ տրամադրված ապրանքների դիմաց ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով կատարված դրամական փոխանցումների միջոցով:
5. Հաշիվ-ապրանքագրերի տրամադրման անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը համապատասխան անդորրագրերով և փաստաթղթերով, որոնք պետք է հաստատված լինեն Հանձնաժողովի համապատասխան եզրակացությամբ

Ձև 1

# ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության ——— մարզի ——— համայնք

«——»--------------20——թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ------------------------------------------------

Հասցե------------------------------------------------------------------------------------

Հեռախոս--------------------------------------------------------------------------------

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Ընտանիքի իրավիճակը

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ | |

| | |
|---|---|
| պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

**Ընտանիքի սոցիալական կապերը**

| Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք | |
|---|---|
| տվյալներ | կարգավիճակ |
| | |
| | |

**Լրացուցիչ տեղեկատվություն**

-----------------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------

**Մասնագետի դիտարկումներ**

-----------------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------

**Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)**

**Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ**

| N | Չափորոշիչը | Չափորոշիչի համար սահմանված միավորը | Ընտանիքի ստացած միավորը |
|---|---|---|---|
| 1 | Նպաստառու ընտանիք | 1 | |
| 2 | Միայնակ մայր | 1 | |
| 3 | Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա | 1 | |
| 4 | Բազմազավակ՝<br>չորս – հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք<br>վեց – յոթ անչափահաս երեխա ունեցող ընտանիք<br>ութ և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք | <br>2<br>3<br>4 | |
| 5 | Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 6 | 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք<br>2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք<br>3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք | 3<br>2<br>1 | |
| 7 | Հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք | 2 | |
| 8 | Տնակ կացարան, ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք | 2 | |
| 9 | Վարձով բնակվող ընտանիք | 1 | |
| 10 | Դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետից տուժած) ընտանիք | 4 | |
| 11 | Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք | 2 | |
| 12 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) անձի ընտանիք | 3 | |
| 13 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք | 2 | |
| 14 | Միայնակ չաշխատող թոշակառու | 2 | |
| 15 | Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք՝<br>Մեկ երեխայի համար<br>Երկու երեխայի համար<br>երեք և ավելի երեխաների համար: | <br>2<br>3<br>4 | |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 17 | Մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք՝ | 2 | |
| 18 | Երկկողմանի ծնողազուրկ (ԱԾԽՄ) երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 19 | Խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք | 3 | |
| 20 | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ( անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն և այլն) անձի ընտանիք | 4 | |
| 21 | 2023թ-ի պատերազմական գործողությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված ընտանիք | 3 | |
| 22 | ՀՀ կառավարության 17 նոյեմբերի 1998 թ-ի N 713 որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի սահմանամերձ բնակավայրերի (Աղին, Հայկաձոր, Անիպեմզա, Բագրավան, Ջրափի, Շիրակավան, Իսահակյան, Լուսաղբյուր) ցանկում բնակվող ընտանիք | 1 | |
| 23 | Այլ անբարենպաստ պայմաններ | 1-4 | |
| | Ընդամենը | | |

Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 99-Ա**

<<12>> սեպտեմբերի 2025 թվականի        քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի Ν 105-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի համայնքի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի Արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին>> Ν 105-Ա որոշման հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) Կանոնադրության տիտղոսաթերթում և բովանդակության մեջ նշված <<ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Մարալիկի արվեստի դպրոց համայնքային հիմնարկի>> բառակապակցությունը փոխարինել <<ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ>> բառակապակցությամբ:

2) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.3.-րդ կետում նշված <<մայիսի /հունիսի / 30-ին կամ 31-ին>> բառերն ու թվերը փոխարինել <<մայիսի 31-ին>> բառով և թվով:

3) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.4.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ <<7.4. Հիմնարկի ուսումնական գործընթացն իրականացնել հնգօրյա

աշխատանքային գրաֆիկով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված օրինակելի ուսումնական պլաններին համապատասխան>>:

4) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.13.-րդ կետը շարադրել նոր բովանդակությամբ, հետևյալ խմբագրությամբ՝

<<7.13. Հաստատության դասարանի միջին խտությունը՝

**ա) Կերպարվեստի բաժնի**

- Գեղանկարչություն 10-20 աշակերտ,
- Քանդակագործություն 6-8 աշակերտ,
- Արվեստանոց 3-6 աշակերտ,

**բ) Դեկորատիվ կիրառական արվեստի բաժին 8-15 աշակերտ,**

- Գորգագործություն,
- Հագուստի մոդելավորում և դիզայն,
- Դեկորատիվ կարատեսակներ,
- Ասեղնագործություն,
- Կերամիկա

գ) **Թատրոնի բաժին 8-12 աշակերտ**

- Թատերական արվեստ,

**դ) Ասմունքի բաժին 8-12 աշակերտ**

- Ասմունք,

**ե) Պարարվեստի բաժին 12-25 աշակերտ,**

- Դասական պարեր,
- Հայկական ժողովրդական պարեր,
- Ժամանակակից և պարահանդեսային պարեր:>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | **կողմ՝ 12** | **դեմ՝ 0** | **ձեռնպահ՝ 0** |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | -------------- | -------------- | -------------- |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | -------------- | -------------- | -------------- |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | -------------- | -------------- | -------------- |

| | | | |
|---|---|---|---|
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Հ. ՁԱՏԻԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 100-Ա**

<<12>> սեպտեմբերի 2025 թվականի          քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով,

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ, համաձայն՝ N 1, N 2 և N 3 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

| | Կողմ՝ 12 | դեմ՝ 0 | ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

| | | | |
|---|---|---|---|
| Հ. ՉԱՏԻԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N 100-Ա որոշման

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ

## (03/01/2025 - 30/06/2025թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամ)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված ի համար | 2025 թ. Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում վարչական մաս | այդ թվում Ֆոնդային մաս | 2025 թվականի 2-րդ եռամսյակի պլան Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում Ֆոնդային բյուջե | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում Ֆոնդային բյուջե | Կատար-ման % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)** | | **1 337 622,70** | **1 337 622,70** | **230 000,00** | **645 168,40** | **645 168,40** | **150 000,00** | **640 391,60** | **640 391,60** | **70 000,00** | **99,3** |
| 1100 | այդ թվում 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) | 7100 | 238 794,90 | 238 794,90 | X | 97 547,40 | 97 547,40 | X | 76 698,50 | 76 698,50 | X | 78,6 |
| 1110 | այդ թվում 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113) | 7131 | 93 000,00 | 93 000,00 | X | 38 500,00 | 38 500,00 | X | 24 756,90 | 24 756,90 | X | 64,3 |
| 1111 | այդ թվում Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 1 000,00 | 1 000,00 | X | 500,00 | 500,00 | X | 1 115,60 | 1 115,60 | X | 223,1 |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 9 000,00 | 9 000,00 | X | 3 000,00 | 3 000,00 | X | 6 591,90 | 6 591,90 | X | 219,7 |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 83 000,00 | 83 000,00 | X | 35 000,00 | 35 000,00 | X | 17 049,40 | 17 049,40 | X | 48,7 |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում | 7136 | 135 000,00 | 135 000,00 | X | 54 000,00 | 54 000,00 | X | 45 045,00 | 45 045,00 | X | 83,4 |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 135 000,00 | 135 000,00 | X | 54 000,00 | 54 000,00 | X | 45 045,00 | 45 045,00 | X | 83,4 |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում | 7145 | 9 194,90 | 9 194,90 | X | 4 447,40 | 4 447,40 | X | 6 325,60 | 6 325,60 | X | 142,2 |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 300,00 | 300,00 | X | 0,00 | 0,00 | X | 788,00 | 788,00 | X | 0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11302 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար | | 1 000,00 | 1 000,00 | X | 500,00 | 500,00 | X | 1 174,50 | 1 174,50 | X | 234,9 |
| 11303 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների  քանդման թույլտվության համար | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 11304 | Համայնքի վարչական տարածքում, ինչպես նաև ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում **հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի և հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի** վաճառքի թույլտվության համար. | | 1 945,00 | 1 945,00 | X | 972,50 | 972,50 | X | 1 121,30 | 1 121,30 | X | 115,3 |
| 11305 | Համայնքի վարչական տարածքում, ինչպես նաև ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11306 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11307 | Օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար. | | 3 812,00 | 3 812,00 | X | 1 906,00 | 1 906,00 | X | 2 256,80 | 2 256,80 | X | 118,4 |
| 11308 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 20,00 | 20,00 | X | 0 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11309 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 65,00 | 65,00 | X | 0,0 |
| 11310 | Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսվարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար. | | 216,00 | 216,00 | X | 108,00 | 108,00 | X | 143,00 | 143,00 | X | 132,4 |
| 11311 | Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11312 | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար (բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների) | | 1 921,90 | 1 921,90 | X | 960,90 | 960,90 | X | 757,00 | 757,00 | X | 78,8 |
| 11313 | Համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար. | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11314 | Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար. | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11315 | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11316 | Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11317 | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11318 | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 11319 | Այլ տեղական տուրքեր | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1140 | 1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում` | 7146 | 1 600,00 | 1 600,00 | X | 600,00 | 600,00 | X | 571,00 | 571,00 | X | 95,2 |
| 1141 | Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | | 900,00 | 900,00 | X | 400,00 | 400,00 | X | 571,00 | 571,00 | X | 142,8 |
| 1142 | Նոտար. գրասենյակների կողմից նոտար. ծառայություն. կատարելու, նոտար. կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 700,00 | 700,00 | X | 200,00 | 200,00 | X | 0,00 | 0,00 | X | 0 |
| 1150 | 1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1151 + տող 1155 ), այդ թվում` | 7161 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1151 | Օրենքով պետ. բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1152 + տող 1153 + տող 1154), որից` | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1152 | Եկամտային հարկ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1153 | Շահութահարկ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1154 | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1155 | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր, տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) | 7300 | 994 809,50 | 994 809,50 | 0,00 | 497 404,80 | 497 404,80 | 0,00 | 497 404,80 | 497 404,80 | 0,00 | 100,0 |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված այլ պետություններից, այդ թվում` | 7311 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1211 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1220 | 2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից | 7312 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | |
| 1221 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոն. դրամաշնորհներ՝ ստացված այլ պետ-ի տեղ. ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7321 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1231 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7322 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | |
| 1241 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) , որից՝ | 7331 | 994 809,50 | 994 809,50 | X | 497 404,80 | 497 404,80 | X | 497 404,80 | 497 404,80 | X | 100,0 |
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 994 809,50 | 994 809,50 | X | 497 404,80 | 497 404,80 | X | 497 404,80 | 497 404,80 | X | 100,0 |
| 1252 | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝ | | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1253 | Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1254 | Այլ դոտացիաներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1255 | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1256 | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262) | 7332 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | 0,00 | |
| 1262 | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում | 7400 | 104 018,30 | 104 018,30 | 230 000,00 | 50 216,20 | 50 216,20 | 150 000,00 | 66 288,30 | 66 288,30 | 70 000,00 | 132,0 |
| 1310 | 3.1 Տոկոսներ այդ թվում՝ | 7411 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | |
| 1311 | Օրենքով նախատեսվ. դեպքերում բանկ. համայնքի բյուջեի ժամ. ազատ միջոց-ի տեղաբաշխ-ից և դեպոզիտ-ից ստ.տոկոսավճար- | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ | 7412 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1321 | Բաժնետիր. ընկեր-ում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժին-ր) | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) | 7415 | 34 712,30 | 34 712,30 | X | 17 356,20 | 17 356,20 | X | 21 762,00 | 21 762,00 | X | 125,4 |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 18 164,30 | 18 164,30 | X | 9 082,20 | 9 082,20 | X | 11 380,90 | 11 380,90 | X | 125,3 |
| 1332 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 2 548,00 | 2 548,00 | X | 1 274,00 | 1 274,00 | X | 1 715,20 | 1 715,20 | X | 134,6 |
| 1333 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 14 000,00 | 14 000,00 | X | 7 000,00 | 7 000,00 | X | 8 665,90 | 8 665,90 | X | 123,8 |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343) | 7421 | 2 999,00 | 2 999,00 | X | 1 199,60 | 1 199,60 | X | 1 557,80 | 1 557,80 | X | 129,9 |
| 1341 | Համայնքի սեփ. հանդ, այդ թվ.տիրազուրկ, համայնքին որպես սեփ. անց.ապրանք-ի (բաց. հիմն. միջոց, ոչ նյութ. կամ բարձրարժեք ակտիվ հանդիս., ինչպես նաև համայնքի պահուստ. պահվող ապրանք. արժեք.) վաճ-ից մուտք | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 1 999,00 | 1 999,00 | X | 799,60 | 799,60 | X | 799,60 | 799,60 | X | 100,0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1343 | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ | | 1 000,00 | 1 000,00 | X | 400,00 | 400,00 | X | 758,20 | 758,20 | X | 189,6 |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում` | 7422 | 62 546,00 | 62 546,00 | X | 29 968,00 | 29 968,00 | X | 39 536,50 | 39 536,50 | X | 131,9 |
| 1351 | Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տող13506+տող13507+տող13508+տող13509+տող13510+տող13511+տող13512+տող13513+տող13514+տող13515+տող13516+տող13517+տող13518+տող13519+տող13520) , այդ թվում` | | 62 546,00 | 62 546,00 | X | 29 968,00 | 29 968,00 | X | 39 536,50 | 39 536,50 | X | 131,9 |
| 13501 | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար | | 1 000,00 | 1 000,00 | X | 500,00 | 500,00 | X | 361,00 | 361,00 | X | 72,2 |
| 13502 | Ճարտար. նախագծ. փաստաթղթ-ով նախ.՛ շինար. թույլտվ. պահանջ., բոլոր շինարար. աշխատանք-ն իրական. հետո շենք-ի և շինութ-երի (այդ թվում դրանց վերակառ-ը, վերականգն-ը, ուժեղ-ը, արդիակ-ը, ընդլայն-ն ու բարեկարգ-ը) կառուց. ավարտը ավարտ. ակտով փաստագր. ձևակերպ. համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13503 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 15,00 | 15,00 | X | |
| 13504 | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13505 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար | | 500,00 | 500,00 | X | 300,00 | 300,00 | X | 250,00 | 250,00 | X | 83,3 |
| 13506 | Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13507 | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | 18 000,00 | 18 000,00 | X | 8 000,00 | 8 000,00 | X | 15 479,90 | 15 479,90 | X | 193,5 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13508 | Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական  և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13509 | Կենտրոնացված ջեռուցման համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13510 | Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում | | 18 000,00 | 18 000,00 | X | 8 000,00 | 8 000,00 | X | 10 862,50 | 10 862,50 | X | 135,8 |
| 13511 | Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13512 | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13513 | Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար | | 17 856,00 | 17 856,00 | X | 9 328,00 | 9 328,00 | X | 8 468,30 | 8 468,30 | X | 90,8 |
| 13514 | Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար | | 6 750,00 | 6 750,00 | X | 3 620,00 | 3 620,00 | X | 3 788,10 | 3 788,10 | X | 104,6 |
| 13515 | Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայր-ից դուրս գտնվող՝ ավազանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմ. և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավոր. տարածքում ընտաեկան կամ գործն. միջոցառումներ անցկաց-ու համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13516 | Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13517 | Համայնք. սեփ. հանդ-ող ընդհանուր օգտագործ. փողոց-ում և հրապարակ-ում (բաց. բակային տարածք-ի, ուսումն., կրթ., մշակութ. և առողջ. հաստատ-երի, պետ. կառավարման և տեղ. ինքնակառ. մարմին-ի վարչ. շենք-ի հարակից | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 13518 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13519 | Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց | | 440,00 | 440,00 | X | 220,00 | 220,00 | X | 311,70 | 311,70 | X | 141,7 |
| 13520 | Այլ տեղական վճարներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1353 | Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական գանձումներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) | 7431 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 1 739,60 | 1 739,60 | X | |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | 0,00 | | X | 0,00 | | X | 1 739,60 | 1 739,60 | X | |
| 1362 | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372) | 7441 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | |
| 1371 | Ֆիզ. անձ. և կազմ. նվիրաբեր-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.)հրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝ տրամ. արտ. աղբյուր-ից | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1372 | Ֆիզ. անձ. և կազմ. նվիրաբեր-ից համայնքին, վերջ. ենթ. բյուջ. հիմն. տնօրինմ. անց. գույքի (հիմն. միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.)հրաց-ից և դրամ. միջ-ից ընթ. ծախս-ի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտք՝ տրամ. ներք. աղբյուր-ից | | 0,00 | | X | 0,00 | | X | 0,00 | | X | |
| 1380 | 3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1381 + տող 1382) | 7442 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 | |
| 1381 | Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) հրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե ստ. մուտքեր՝ տրամ. արտաքին աղբյուր-ից | | 0,00 | X | | 0,00 | X | | 0,00 | X | | |
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի /բացառությամբ 8-րդ կետի/ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի հունվարի 7-ի N 02.1/11.2/00044-2025 գրությունը՝ <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման վերաբերյալ պարզաբանումների մասին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սահմանել դրամական հատուցման ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

**<u>Օրակարգ-10</u>**

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցող համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երտասարդության հարցերի բաժնի պետ Գոհար Ծերունյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց որոշման նախագծով Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի Արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 105-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրության մեջ նախատեսված փոփոխություններն ու լրացումները և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ՄԱՐԱԼԻԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի 2007 թվականի նոյեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի Արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին>> N 105-Ա որոշման հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարալիկի արվեստի դպրոց» համայնքային հիմնարկի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) Կանոնադրության տիտղոսաթերթում և բովանդակությամ մեջ նշված <<ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Մարալիկի արվեստի դպրոց համայնքային հիմնարկի>> բառակապակցությունը փոխարինել <<ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ>> բառակապակցությամբ:

2) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.3.-րդ կետում նշված <<մայիսի /հունիսի / 30-ին կամ 31-ին>> բառերն ու թվերը փոխարինել <<մայիսի 31-ին>> բառով և թվով:

3) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.4.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ <<7.4. Հիմնարկի ուսումնական գործընթացն իրականացնել հնգօրյա աշխատանքային գրաֆիկով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված օրինակելի ուսումնական պլաններին համապատասխան>>:

4) Կանոնադրության 7 -րդ գլխի 7.13.-րդ կետը շարադրել նոր բովանդակությամբ, հետևյալ խմբագրությամբ՝

<<7.13. Հաստատության դասարանի միջին խտությունը՝

**ա) Կերպարվեստի բաժնի**

- Գեղանկարչություն 10-20 աշակերտ,
- Քանդակագործություն 6-8 աշակերտ,
- Արվեստանոց 3-6 աշակերտ,

**բ) Դեկորատիվ կիրառական արվեստի բաժին 8-15 աշակերտ,**

- Գորգագործություն,
- Հագուստի մոդելավորում և դիզայն,
- Դեկորատիվ կարատեսակներ,
- Ասեղնագործություն,
- Կերամիկա

**գ) Թատրոնի բաժին 8-12 աշակերտ**

- Թատերական արվեստ,

**դ) Ասմունքի բաժին 8-12 աշակերտ**

- Ասմունք,

**ե) Պարարվեստի բաժին 12-25 աշակերտ,**

- Դասական պարեր,
- Հայկական ժողովրդական պարեր,
- Ժամանակակից և պարահանդեսային պարեր:>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

<u>**Օրակարգ-11**</u>

**11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Տեղեկացվեց, որ համայնքի բյուջեի 1-ին կիսամյակի եկամուտների առաջադրանքը կատարվել 99,3 տոկոսով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետությա բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի դրույթներով,

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2025 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարմա արդյունքների վերաբերյալ, համաձայն՝ N 1, N 2 և N 3 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Որոշման N 1, N 2 և N 3 հավելվածները կցվում են արձանագրությանը:

**<u>Օրակարգ-12</u>**

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Նշվեց, որ 2028 թվականին համայնքի բյուջեի եկամուտները կանխատեսվում է 2411903,7 հազ. դրամ, որը ընթացիկ տարվա բյուջեի պլանային թիվը գերազանցում է 80. 8 տոկոսով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**Օրակարգ-13**

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պարտականությունները կատարող Անժելա Սաղաթելյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ նախատեսված փոփոխությունները և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1--3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-14</u>

**14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 9 ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի թվով 9 կտոր հողամասեր օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրված չեն: Համայնքապետարանը այդ հողամասերի նկատմամբ գրանցել է համայնքի սեփականության իրավունքները և համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում նախագիծ՝ այդ հողամասերը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով վարձակալության տրամադրելու համար: Հողամասերի բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը ներկայացված են հավելվածի տեսքով, որը տրամադրված է Ձեզ:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրեց ավահանու անդամ Էդիկ Ոհռուտյանը:

Առաջարկվեց վարձակալության տրամադրվող 2-րդ կարգի ջրովի վարելահողերի մեկ հեկտարի համար վաձավճարի մեկնարկային չափ սահմանել 25000 ՀՀ դրամ,

նախատեսված <<20000>> ՀՀ դրամի փոխարեն, իսկ վարձակալության համար սահմանված <<10>> տարի ժամկետը փոխարինել <<5>> տարով:

Քվեարկության կողմ 10, դեմ 2 /ավագանու անդամներ՝ Հ. Ջատիկյան, Մ. Ենոքյան/, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ներկայացված առաջարկությամբ որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 9 ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի թվով 9 կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

2. Հաստատել հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

**Օրակարգ-15**

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ**

**ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,71803 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՎԻԿԱԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված է օգտակար հանածոյի արդյունահանման <<31>> հունվարի 2022թ. N ՇԱԹ-29/664 թույլտվությունը, <<31>> հունվարի 2022թ. NL-664 լեռնահատկացման ակտը և ընկերության հետ կնքվել է ընդերքօգտագործման <<31>> հունվարի 2022թ N Պ-664 պայմանագիր, համաձայն որի «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլված է 50 տարի

ժամկետով Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի տարածքում գտնվող Անիպեմզայի պեմզայի և տուֆերի հանքավայրում տուֆ քարի արդյունահաման աշխատանքներ իրականացնել:

Ընկերության տնօրեն Սամվել Ավետիսյանը դիմել է Անի համայնքի ղեկավարին՝ լեռնահատկացման ակտով նախատեսված հողամասը ընկերությանը տրամադրելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսված է Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական տարածքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 7 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0032 կադաստրային ծածկագրով **0,71803** հեկտար հողամասը (Վկայական N 09072025-08-0047) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 50 տարի ժամկետով, մինչև՝ 2072 թվականի հունվարի 31-ը, **35910 (երեսունհինգ հազար ինը հարյուր տաս)** Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,71803 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՎԻԿԱԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման <<31>> հունվարի 2022թ. N ՇԱԹ-29/664 թույլտվությունը, <<31>> հունվարի 2022թ. NL-664 լեռնհատկացման ակտը և ընդերքօգտագործման <<31>> հունվարի 2022թ N Պ-664 պայմանագիրը, համաձայն որի «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլված է 50 տարի ժամկետով Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի տարածքում գտնվող Անիպեմզայի պեմզայի և տուֆերի հանքավայրում տուֆ քարի արդյունահաման աշխատանքներ իրականացնել, հաշվի առնելով «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ըներության գործադիր տնօրենի 2025 թվականի մարտի 19-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական տարաքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 7 հողամաս/, համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0032 կադաստրային ծածկագրով **0,71803 հեկտար** հողամասը (Վկայական N 09072025-08-0047) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 50 տարի ժամկետով, մինչև՝ 2072 թվականի հունվարի 31-ը, **35910 (երեսունհինգ հազար**

**ինը հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «ՎԻԿԱԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ Ընկերություն, Պետական միասնական գրանցման համար՝ 51.110.1132678, 19.06.2020թ., ՀՎՀՀ 04235978, գործադիր տնօրեն՝ Սամվել Վարդանի Ավետիսյան, Անձնագիր՝ AS0356659, տրված՝ 31.08.20218 թ., 022-ի կողմից, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ , Ռիգայի փողոց, տուն 119):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

<u>Օրակարգ-16</u>

**16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԹԱՆԴԻԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հարգելի գործընկերներ

Քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանը, Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0184 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00773 հեկտար հողամասում ինքնակամ կառուցել է 74,93 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինություններ, որից տաղավար՝ 69,32 քառակուսի մետր, պարիսպներ՝ 3,33 և 2,28 քառակուսի մետր: Օրենսդրությամբ սահմանված կարգով

ինքնակամ շինությունը ճանաչվել է օրինական և անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները ենթարկվել է պետական գրանցման (Վկայական՝ N 02042024-08-0054, հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Բարեկամության փողոց 80/4 տաղավար):

Նշվեց, որ քաղաքացին ընդունել է օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված նշված գույքի գնման նախապատվության իրավունքը և դիմել է համայնքապետարան այն իրեն վաճառելու խնդրանքով:

Որոշման նախգծով նախատեսվում է տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 74,93 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0184 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00773 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 215 278 (երկու հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով

վաճառել կառուցապատողին, քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանին:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի <<բ>> ենթակետի, 35. 1. -րդ կետի, 39-րդ կետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԹԱՆԴԻԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ

հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի <<բ>> ենթակետի, 35.1.-րդ կետի, 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանը, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 74,93 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունների, որից տաղավար՝ 69,32 քառակուսի մետր, պարիսպներ՝ 3,33 և 2,28 քառակուսի մետր, և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0184 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00773 հեկտար հողամասի (Վկայական՝ N 02042024-08-0054, հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Բարեկամության փողոց 80/4 տաղավար) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **74,93** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունները, որից տաղավար՝ 69,32 քառակուսի մետր, պարիսպներ՝ 3,33 և 2,28 քառակուսի մետր և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0020-0184 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00773 հեկտար հողամասը (Վկայական՝ N 02042024-08-0054, հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Բարեկամության փողոց 80/4 տաղավար) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **215 278 (երկու հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի Հարություն Ավթանդիլի Առաքելյանին (անձնագիր՝ AT0533658, տրված՝ 04.08.2020 թ, 012-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի փողոց, շենք 25/2, բն. 13):

2. Որոշման 1-ին կետով ձևավորված վաճառքի ընդահանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված **26000 /քսանվեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ** վճարները՝ վճարման 23/01/24 (7101) 240123076151049-24 և 23/01/24 (415) 240123076104049-23 անդորրագրերի հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգ-17

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱԶ ՄԱԿՆԻՇԻ 936LL70 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԼԱՆՋԻԿ-ՄԱՐԱԼԻԿ-ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ-ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ ինչպես տեղյակ եք կանոնավոր ուղևորափոխադրումների բացակայության պատճառով, հատկապես առավոտյան ժամերին, խիցտ լարված է Լանջիկ-Մարալիկ-Գյումրի ուղևորափոխադրումները, որը արդարացի դժգոհություն է առաջացրել հատկապես ուսանողության շրջանում: Ներմարզային ուղևորափոխադրումների կազմակերպումը օրենսդրությամբ վերապահված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը: Սական նշված երթուղու համար կազմակերպված մրցույթները չեն կայացել՝ հայտեր չներկայացնելու պատճառով:

Խնդիրը կարգավորելու համար համայնքապետարանը նախաձեռնություն է հանդես բերել, նշված երթուղին կազմակերպել համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներով, որի վերաաբերյալ լիազոր մարմինի կողմից տվել է դրական

եզրակացություն, մինչև օրենքով սահմանված կարգով երթուղու մրցույթի կայացումը:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ՊԱԶ>> մակնիշի 936LL70 պետական համարանիշի ավտոբուսով /փոխարինող տրանսպորտային միջոցը՝ <<ՖՈՐԴ>> մակնիշի 933LL70 պետական համարանիշի ավտոբուս/ կազմակերպել Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղով ժամանակավորապես ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցում: Որոշման հավելվածում սահմանվել են այդ ծառայության դիմաց վճարների դրույքաչափերը:

Որոշման հավելվածը տրամադրված է Ձեզ:

**ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱԶ ՄԱԿՆԻՇԻ 936LL70 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԼԱՆՋԻԿ-ՄԱՐԱԼԻԿ-ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ-ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ**

| Հ/հ | Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը | Մեկնման ժամանակացույց | Սահմանված դրույքաչափերը ըստ երթուղու /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1. | համարանիշի ավտոբուսով /փոխարինող տրանսպորտային միջոցը՝ <<ՖՈՐԴ>> մակնիշի 933 LL70 պետական համարանիշի ավտոբուս/ Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղով ուղևորափոխադրում | X | X |
| | **Ուղիղ** | | |
| | Մարալիկ-Լանջիկ | 7:40 | 150 |
| | Լանջիկ-Մարալիկ | 8:00 | 150 |
| | Մարալիկ-Գուսանագյուղ | 8:20 | 200 |
| | Գուսանագյուղ-Գյումրի | 8:40 | 250 |
| | Լանջիկ-Գուսանագյուղ | X | 250 |
| | Լանջիկ-Գյումրի | X | 350 |
| | Մարալիկ-Գյումրի | X | 300 |
| | Հետադարձ | X | X |
| | Գյումրի-Գուսանագյուղ | 14:30 | X |
| | Գուսանագյուղ-Մարալիկ | 15:00 | X |
| | Մարալիկ-Լանջիկ | 15:20 | X |
| | Լանջիկ-Մարալիկ | 15:40 | X |

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994

որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգի>> 69-րդ կետի դրույթներով և հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի N ԴԽ/25. 2/30415-2025 գրությունը՝ «Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի» ներմարզային երթուղու ժամանակավոր սպասարկման գործընթացի կազմակերպմանը համաձայնություն տալու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված հարցումներին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցի սպառիչ պատասխաններ:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ՊԱԶ>> ՄԱԿՆԻՇԻ 936LL70 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԼԱՆՋԻԿ-ՄԱՐԱԼԻԿ-ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ-ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԵՐԹՈՒՂՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգի>> 69-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի N ԴԽ/25.2/30415-2025 գրությունը՝ «Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի» ներմարզային երթուղու ժամանակավոր սպասարկման գործընթացի կազմակերպմանը համաձայնություն տալու վերաբերյալ, հաշվի առնելով Լանջիկ, Մարալիկ և Գուսանագյուղ բնակավայրերի բնակչության խնդրանքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ՊԱԶ>> մակնիշի 936LL70 պետական համարանիշի ավտոբուսով /փոխարինող տրանսպորտային միջոցը՝ <<ՖՈՐԴ>> մակնիշի 933 LL70 պետական համարանիշի ավտոբուս/ Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղով ժամանակավորապես ուղևորափոխադրումների ծառայությունների մատոցման կազմակերպմանը:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետով նախատեսված տրանսպորտային միջոցներով Լանջիկ – Մարալիկ – Գուսանագյուղ – Գյումրի և հետադարձ երթուղով ժամանակավորապես ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման դիմաց վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից և գործում է մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994 որոշմամբ հաստատված կարգով՝ ավտոմոբիլային տրանսպորտով Լանջիկ-Մարալիկ-Գուսանագյուղ-Գյումրի և հետադարձ երթուղու ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրությունը:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

**Օրակարգ-18**

**18) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի>> 7-րդ և 9-րդ կետերի համաձայն, համայնքի ղեկավարը յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին: Սակայն համայնքի ավագանին արձուկուրդում գտնվելու պատճառով հնարավոր չի եղել նշված ժամկետում հողային հաշվեկշիռը համաձայնեցնել համայնքի ավագանու հետ: Չնայած դրան, Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ցուցումով, հողային հաշվեկշիռը սահմանված ժամկետում ներկայացվել է լիազոր մարմին:

Տեղեկացվեց, որ համաձայն ընթացիկ տարվա հողային հաշվեկշռի, համայնքի վարչական տարածքի փոփոխություն տեղի չի ունեցել, որոշակի փոփոխություններ են կատարվել հողերի նպատակային նշանակությունների մասով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված հարցումներին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի>> 9-րդ կետի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի հողային հաշվեկշռին՝ հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-19</u>

**19) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 303 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՏԱՍ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> հասարակական կազմակերպության նախագահ Գրիգոր Երիցյանը՝ Անի համայնքի 15-30 տարեկան երիտասարդների համար անվճար կրթական և ժամանցային ծառայություններ մատուցելու նպատակով համապատասխան շենքային հարմարություններ տրամադրելու խնդրանքով:

Համայնքապետարանը կարևորելով անվճար կրթական և ժամանցային ծառայություններ մատուցելու հասարական կազմակերպության նխաձեռնությունը, որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 1-ին հարկի 303 քառակուսի մետր ներքին մակերեսով անօգտագործելի տարածքը 10 /տաս/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> հասարակական կազմակերպությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ ավագանու անդամների կողմից ներկայացված հարցումներին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 303 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՏԱՍ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> հասարակական կազմակերպության նախագահ Գրիգոր Երիցյանի 2025 թվականի օգոստոսի 26-ի դիմումը՝ Անի համայնքի 15-30 տարեկան երիտասարդների համար անվճար կրթական և ժամանցային ծառայություններ մատուցելու նախաձեռնության վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 2/ 1-ին հարկի 303 քառակուսի մետր ներքին մակերեսով տարածքը 10 /տաս/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> հասարակական կազմակերպությանը՝ Անի համայնքի 15-30 տարեկան երիտասարդների համար անվճար կրթական և ժամանցային ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով <<ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ>> հասարակական կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

<u>**Օրակարգ-20**</u>

**20) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ 48,25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՏԱՍ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ>> հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Այվազյանը Սառնաղբյուր գյուղական բնակավայրի երիտասարդներին համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելու և նրանց անձնական ու սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքում համապատասխան տարածք տրամադրելու խնդրանքով:

Համայնքապետարանը կարևորելով հասարակական կազմակերպության կողմից Սառնաղբյուր բնակավայրի երիտասարդներին համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելու և նրանց անձնական ու սոցիալական զարգացմանը նպաստելու նախաձեռնությունը, որոշման նախագծով նախատեսվում է համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան երրորդ հարկի 48,25 քառակուսի մետր ներքին մակերեսով տարածքը 10 /տաս/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ>> հասարակական կազմակերպությանը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ 48,25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՏԱՍ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով <<Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ>> հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Այվազյանի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը՝ Սառնաղբյուր գյուղական բնակավայրի երիտասարդներին համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելու և նրանց անձնական ու սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան երրորդ հարկի տարածքը տաս տարի ժամկետով անհայտույց տրամադրելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Սառնաղբյուր, 1-ին փողոց, թիվ 51/ երրորդ հարկի **48.25** քառակուսի մետր ներքին մակերեսով տարածքը **10 /տաս/** տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ>> հասարակական կազմակերպությանը՝ Սառնաղբյուր գյուղական բնակավայրի երիտասարդներին համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելու և նրանց անձնական ու սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա.

Սարիբեկյանին.

Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործընթացը պատշաճ կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**Օրակարգ-21**

**21. ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԱԿԱՐՏԱ ՔԱՂԱՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ՝ 6-Ը ԿԱՅԱՆԱԼԻՔ ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ, <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող համայնքի ավագանու անդամ՝ Էդիկ Ոհռուտյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահը, իր 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 249 գրությամբ դիմել է Անի համայնքի ղեկավարին՝ սամբոյի աշխարհի առաջնության մասնակից՝ Անի համայնքի բնակիչ, <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան՝ Արմեն Մուշեղի Սաֆարյանի գործուղման ծախսերը հոգալու համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով:

Կարևորելով Արմեն Մուշեղի Սաֆարյանի սամբոյի աշխարհի առաջնության մասնակցությունը, որոշման նախագծով նախատեսվում է Ինդոնեզիայի Հանրապետության Ջակարտա քաղաքում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 6-ը կայանալիք սամբոյի աշխարհի պատանիների և երիտասարդների առաջնության մասնակից, Անի համայնքի բնակիչ, <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան՝ Արմեն Մուշեղի Սաֆարյանի գործուղման ծախսերի համար համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից Արմեն Մուշեղի Սաֆարյանին տրամադրել 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

**ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԱԿԱՐՏԱ ՔԱՂԱՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ՝ 6-Ը ԿԱՅԱՆԱԼԻՔ ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ, <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 249 գրությունը՝ սամբոյի աշխարհի առաջնության մասնակից՝ Արմեն Մուշեղի Սաֆարյանի ծախսերը հոգալու մասին, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Ինդոնեզիայի Հանրապետության Ջակարտա քաղաքում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 6-ը կայանալիք սամբոյի աշխարհի պատանիների և երիտասարդների առաջնության մասնակից, Անի համայնքի բնակիչ, <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան՝ Արմեն Մուշեղի Սաֆարյանի գործուղման ծախսերի համար համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից Արմեն Մուշեղի Սաֆարյանին /անձնագիր AX0694202, տրված՝ 21.04.2025թ. 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Ձերժինսկի փողոց, շենք 6 բնակարան 19-20/ տրամադրել 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստը վարող համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց նիստի մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ**

<<12>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ